

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**ՍԵՌԻ ՀԱՏԿԱՆԻՇՈՎ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ
ՄԱՐԶԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարված աշխատանքը	Ֆինանսավորման աղբյուրը
1.	Տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների և համայնքային ծառայողների համար սեռի հատկանիշով բռնության կանխարգելման հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում	Մարզի քաղաքային 3 համայնքներում /Աշտարակ, Ապարան և Թալին/ իրազեկման նպատակով կազմակերպվել են 6 հանդիպումներ համայնքային ծառայողների և սոցիալական աշխատողների համար: Բոլոր մասնակիցներին տրամադրվել է տեղեկատվական նյութեր:	Ֆինանսավորում չի պահանջվել
2.	Հասարակության տարբեր խմբերի համար սեռի հատկանիշով բռնության ենթարկված անձանց ուղղորդման մեխանիզմի վերաբերյալ տեղեկատվության հաղորդում	Սեռի հատկանիշով բռնության երևույթի վերաբերյալ պատրաստվել է տեղեկատվական փաթեթ /թերթոններ, թեժ գծերի համարներ, ինչպես նաև՝ Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին՝ ՀՀ օրենք/ և բաժանվել բոլոր համայնքներին:	Ֆինանսավորում չի պահանջվել
3.	ԶԼՄ-ներում սեռի հատկանիշով բռնության դեմ պայքարի թեմաներով նյութերի հրապարակում	Տարվա ընթացքում մարզային թերթերում սեռի հատկանիշով բռնության դեմ պայքարի թեմաներով հրապարակվել են 2 նյութեր, իսկ մարզային հանձնաժողովի կատարած աշխատանքների մասին տեղեկատվությունները տեղադրվել են մարզպետարանի	Ֆինանսավորում չի պահանջվել

		պաշտոնական կայքում:	
4.	Հանցագործությունների կանխարգելման պետական հայեցակարգի պահանջների համաձայն անչափահասների շրջանում սեռի հատկանիշով բռնության մասին իրազեկության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում	Մարզային ոստիկանության անչափահասների բաժնի աշխատակիցների հետ համագործակցելով՝ մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժինը մարզի 25 դպրոցներում սեռի հատկանիշով բռնության վերաբերյալ դասընթացներ է կազմակերպվել	Ֆինանսավորում չի պահանջվել
5.	Սեռի հատկանիշով բռնության դեմ ուղղված հատուկ ակցիաների իրականացում	Միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ համագործակցելով, կազմակերպվել է «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» ամենամյա մարզային քարոզարշավ և ֆիլմերի ցուցադրում մարզի 10 դպրոցներում:	Ֆինանսավորում չի պահանջվել
6.	Բուժհաստատությունների մասնագետների սեռի հատկանիշով բռնության հայտնաբերման և խորհրդատվական հմտությունների զարգացում	Մարզերի 20 բժիշկների համար կազմակերպվել են դասընթացներ՝ բռնության հայտնաբերման և խորհրդատվության հմտությունների զարգացման նպատակով:	Ֆինանսավորում չի պահանջվել
7.	Մարզի համայնքներում իրավական իրազեկության բարձրացմանը և ընդդեմ սեռի հատկանիշով բռնության կանխարգելման ՀՀ քաղաքականության լուսաբանմանն ուղղված միջոցառումների իրականացում:	Կազմակերպվել են հանդիպում-զրույցներ մարզի 15 համայնքներում, որին մասնակցել են 170 անձ:	Ֆինանսավորում չի պահանջվել